ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2018 թվականի N 89

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Անդրանիկ Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող 010-011 ծածկագրի (վկայական N 2157014, 0.1 հա) և 0011-0004 ծածկագրի 0.03706 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերին Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել միասնական 1-ին փողոց N 47 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թվականի հոկտեմբերի 10

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2018 թվականի N 90

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. 2018 թվականի հոկտեմբերի 15-ին՝ ժամը 11^{00}-ին, գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.

   1) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2018 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի ընթացքի մասին
   2) Դրամական օգնություն հատկացնելու մասին

2. Պարտավորեցնել աշխատակազմի քարտուղար Արմինե Զաքարյանին՝ օրենքով սահմանված կարգով ավագանու անդամներին տրամադրելու արտահերթ նիստի օրակարգը, ընդգրկվելիք հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2018 թվականի հոկտեմբերի 10

գ. Նոր Արտամետ